Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Ռազմավարական քաղաքականության վարչության պետի տեղակալ Արթուր Ղավալյանի հաշվետվությունը 2023 թվականի հոկտեմբերի 8-ից 11-ը Իրանի Իսլամական Հանրապետություն գործուղման վերաբերյալ**

1. ***ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ***
Արթուր Ղավալըան

2. ***ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ***
Ռազմավարական քաղաքականության վարչության պետի տեղակալ

3. ***ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ***

Իրանի Իսլամական Հանարապետություն (ք. Շահրե Բաբաք),
2023 թվականի հոկտեմբերի 8-ից 11-ը

4. ***ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ***
«Ալվանդ Մայնինգ և Միներալ Ինդաստրիզ» Ընկերություն

5. ***ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ***
Այց «Ալվանդ Մայնինգ և Միներալ Ինդաստրիզ» Ընկերության՝ Քերման նահանգում գտնվող գործարան և «թանք բիոլիչինգ» եղանակով պղնձի կատոդի արտադրության գործընթացին տեղում ծանոթացում:

6. ***ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ***

Այցն անցկացվել է «Ալվանդ Մայնինգ և Միներալ Ինդաստրիզ» Ընկերության՝ Քերման նահանգում գտնվող գործարանում: Ընկերությունը նախատեսում է նմանատիպ գործարան կառուցել և շահագործել Սյունիքի մարզում՝ Սիսիան համայնքին հարակից տարածքում: 3 անձից բաղկացած շրջակա միջավայրի նախարարության մասնագիտական թիմում ներառված էին նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Մարտիրոսյանը և փորձագետ Հերիքնազ Մկրտչյանը:

Այցի ընթացքում ընկերության պաշտոնյաների կողմից ներկայացվել են «թանք բիոլիչինգ» եղանակով պղնձի կատոդի արտադրության գործընթացի ցածր արտանետումներով և սակավաթափոն տեխնոլոգիան, ընկերության կողմից իրականացված և իրականացվող բնապահպանական և սոցիալական ծրագրերը:

Երկրորդ օրը Թեհրան քաղաքում տեղի ունեցավ հանդիպում «Միդկո» (MIDHCO) հոլդինգի (որի կազմում է «Ալվանդ Մայնինգ և Միներալ Ինդաստրիզ» Ընկերությունը) ղեկավար պարոն Փուրմանդի

և ղեկավար կազմի այլ ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում շրջակա միջավայրի նախարարության մասնագիտական թիմի կողմից ներկայացվեց տեղեկատվություն՝ նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա լինելու վերաբերյալ: Բարձրացվեցին Սյունիքի մարզի բնապահպանական կարևորության, ազդակիր համանքների կայուն զարգացման, նվազ արտանետումների և սակավաթափոն տեխնոլոգիաների կիրառության անհրաժեշտության վերաբերյալ հարցեր, տրվեցին պարզաբանումներ ընկերության ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ: Հանդիպման ընթացքում առաջարկվեց դիտարկել նաև Հայաստանի Հանրապետությունում լքված և տիրազուրկ պոչամբարների թափոնների՝ ընկերության կողմից վերամշակման հնարավորությունը, որը հավանության արժանացավ ընկերության ղեկավարության կողմից:

## 7. ***ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ***

Հանդիպումների ընթացքում կարևորվեց Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև փոխհամագործակցության արդյունավետությունը, ձեռք բերվեց հետագա համագործակցության շարունակականության պայմանավորվածություն:

Ռազմավարական քաղաքականության վարչության պետի տեղակալ
Արթուր Ղավալյան

13 հոկտեմբերի 2023 թվական